

կիսկոս Ներայէ, Մարտիրի, Քրէմթաքոսթէ՝ որ զամենքը հիացուց իւր Figlia di Niobe արծառնովն :

Եւ իմչպէս այս արծառներմ՝ ուրիշ արծառագործաց զործոց հետ խառնուելով համակրելի եղամ, մոյմպէս եւս հիթ վերդելշեալ ընկերութեամ մկարներն ուրիշ իտալական մկարչաց հետ խառնուելիմ ոչ ամշխատակ պիտի մմայիմ եւ ոչ ալ իրենց արժէքը պիտի մուգէր : Չասմ զի, այդ ընկերութեամ ամզամ չգորուած մկարչաց մէջ, բաց ի առողջ երիտասարդներմ՝ իմչպէս եմ ծիծի եւ լիմոյ Մեկմզդիոյ եւ Յովսէփի ջիարտի, կամ եւս Պոլթոլուցցիի, Նիթարիմի, Վիցցոթթոյի, Ստեֆանիի, Ճոլիի, Ֆալտէրմի, Քորէլիի, Ֆաթթօրիի, Գաւիէլիի, Պէլլօմիի, եւ այլ բազմաթիւ ծիր ու երիտասարդ հռչակաւոր մկարչաց զօրաւոր դաս մը : Եւ ամշուշտ այդ ընկերութեամ չեմ կարօտիր Մէմթէպի Visione triste, դրոսոյ Alto canavese մծծ գիւղամիացի, Ամմիլոյ տալլՕքայի Primavera-ն, իտալական վերջիմ սրահիմ վայմ ու յաշողութիւնը, իտալական գեղարուեստիմ համբաւը բարձր ստիժմանի մէջ կը բռնէ :

*

Այս սրահիմ ամցնելով վարագորագարդ դռնիմ ի համդիպակաց սրահի, կը տեսնեա Կոնսոլ մը՝ որ թուի թէ չորս վրայ կը սահի. Ֆալտէթթոյի Tra-gediam է, որում առեքեոյթք բնական շարժումը կը ձգէ զայցնելում այդ սրահիմ մէջ, եւ կարծես թէ ցարտար եւ պարզ կերպով յաշողած իրականութիւնում տեսնողիմ վրայ ոգեւորիչ տպաւորութիւն մը կ'ընէ :

Կ'ըսէիմ՝ թէ այս մկարը ի համդէս հանելմ յետ ամհու մկարչիմ՝ մեծելոյմ պատիւ պիտի չընէր : Մակայմ թերեւս մեռեալմ լաւ ծառայութիւն մը կ'ընէ մեզի՝ շարունակելով սորվեցընել, եւ յորդորելով՝ որ չգարտուղիմք :

Եւ յիրաւի, ճուցահամդէսէմ դուրս ելլողմ՝ Ծաւր Ֆալտէթթոյի ամուսնը իւր շրթամց վրայ կրիւլով կ'ըլլէ ամկէց, եւ դարձեալ կը գտնէ Իւր, այս սիմքմ՝ Ճէփփօ Վենետիկը :

Հաստարկաց պարտիզիմ արծակ եւ լուսաւոր կողմիմ կ'երեւիմ քոլոյր կղզիք՝ իրենց ազնուական մեծ վայելչութեամբ, եւ որոմք լուսաւոր պսակ մը կազմած եմ հիւամալի քաղքիմ շուրջը :

~~~~~

**ՔԻԻԻՐԱԿՆ.** — Կը հրատարակէ բանասիրական, տեղագրական, ազգագրական յօդուածներ, Խմբ. Ս. Դաշթեան : — Գինն է 12 ֆռ. :

Հասցէ Direction du «Puragh» Bahtché kapou kazasker han N. 16 CONSTANTINOPLE.

## ԳՐԱԴՈՍՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

1. Սերէնսի պատմութիւնը եւ Մ. Խոննացի. Հեղինակ՝ Ստ. Մալխասեանց. — Սոյն համառօտ՝ բայց օգտակար զբոյրիս է «մատենագրական ուսումնասիրութիւն» մի, որով ուզեր է Հեղինակն ապացուցանել նախ, թէ «Սերէնսի պատմութեան սկզբում դրուած, իբրեւ անծանօթ Հեղինակների գրուածքներ ճանաչուած, երկու Գաղութիւնները... անտարակոյս Սերէնսին են պատկանում, իբրեւ նրա պատմութեան անբաժան, համերաշխ եւ անհրաժեշտ մասեր» . եւ երկրորդաբար «ցոյց տալ՝ թէ Է. դարի կէսերում աղբէ խորենացու պատմութիւնը յայտնի էր եւ հռչակուած, եւ նրանից օգուտ է քաղել Սերէնս... Սոկրատի եւ Սեղբեստրոսի վարքի հայերէն թարգմանութիւնից դեռ բաւական ժամանակ յառաջ» . (Առաջաբան, յէջ 2 եւ Է) : — Ահա նոյն յախտեանական խնդիրն է դարձեալ՝ որ կը յուզուի տարբեր տեսակետով, Մ. Ի խորենացույ գոյութեան կամ դրութեան ժամանակի խնդիրն, զոր անցեալ դարս պիտի կտակէ յաջորդին՝ հայ գրականութեամբ պարագայդ ապագայ բանասէրները դեռ եւ դապեցնելու համար. — Հեղինակն՝ առաջին չորս էջերուն մէջ՝ սեղմ ոճով Ա. եւ Բ. գաղութեանց բովանդակութիւնը կը դնէ. եւ ապա մէջ կը բերէ՝ ժամանակի կարգով ազգային եւ օտար բանասիրաց այլեայլ կարծիքները, որ ունեցեր են սոյն երկու դարութեանց մասին : Եւ ահա ըննական ասպարիզին վրայ կը տեսնենք Հակառակ կարծեօք դէմ առ դէմ ճակատող գիտնականաց երկու խմբեր, իմի՜ ի նպաստ վաւերականութեան (այսինքն՝ Սերէնսի պատկանելուն) այդ երկու դարութեանց, միւսն՝ Հակառակ անոր : Առաջին խմբին պարագլուխն է նոյն ինքն թ. Մեհրապտեանց, առաջին հրատարակողն Սերէնսի պատմութեան, որուն կը Հետին Գաթրճեան, Էմին եւ մասամբ եւ Լանգրուս : Երկրորդ խումբն աւելի ստուար

և զօրաւոր է, որու պարագլուխն է Ք. Պատկանեան, որ՝ յամին 1862 առաջին անգամ՝ բոլորովին նոր և օտար կարծիք յայտնեց յիշեալ դպրութեանց մասին. այսինքն՝ թէ Սեբէոսի չին պատկանիր զորա, այլ մի կամ երկու հեղինակաց գործեր են<sup>1</sup>. և սոյն կարծիքս հետզհետէ ընդհանրացաւ, « և այսօր բանասիրութեան մէջ անվիճելի է համարուում »: Յիրաւի դիւթիչ զօրութիւն մ'ունեցաւ Պատկանեանի կարծիքն, զի զրիթէ բոլոր արդի՝ հայ գրականութեան պարագլուխն անաւոր գիտնականը, Հիւրշման, Բառու, զարտնէր, Գարագաշեան, Կարբիբ, Ֆետաւեր, Մառ, Խալաթեանց, և այլն, առանց վարանելու ընդունեցան զայն, Անանեան ոմն կոչելով Ա դպրութեան զօրը կամ խմբազօրը, զոր ոմանք Սեբէոսէ յառաջ կը դնեն և այլք յետոյ: Թէլս 9—11 մէջ կը բերուին Գուշադիդի և Խալաթեանի կարծիքներն. առաջինն՝ նոյն ինքն զԽորենացին կը համարի հեղինակ Ա դպրութեան, որ նախ « նրան համառօտապէս ծրագրել է և ապա ընդարձակօրէն մշակել իւր պատմութեան մէջ »: Իսկ Խալաթեանց, ակնհեր նմանութիւն գտնելով հանդերձ Ա դպրութեան և Սեբէոսի պատմութեան մէջ, ոչ այնչափ յալոյ փաստերով կը հաստատէ՝ թէ Ը—Թ դարերուն մէջ գրուած է այն « մի անհանօթ հեղիւսակից, որ չափազանց ենթարկուել է Սեբէոսի լեզուի և օճի ազդեցութեան »: Պ. Մալխասեանց, որ՝ կարելի է ըսել՝ կարծեօք բոլորովին հակառակեայ է յիշեալ բանասիրաց և ի մասնաւորի Խալաթեանի, անոնց դէմ կը մաքառի բաւական զօրաւոր փաստերով, ուր այնպիսի խնդիրներ կը շուշափէ՝ որոց վրայ յետոյ աւելի ընդարձակօրէն պիտի խօսի: Իսկ գալով Բ դպրութեան՝ գիտնականաց կարծիքներն աւելի հաստատ և որոշ են անոր մասին, քանի որ զրիշն՝ իրրեւ աղբիւր՝ Խորենացոյ հետ կը յիշէ նաև Սա. Տարօնացի, զոր ամենայն բանաւորք կը հասկնան՝ Սա. Ասողիկ. ապա

ուրեմն ԺԱ դարէն յառաջ չէր կարող գրուած լինել այդ դպրութիւնն: Վերջերս միայն Ն. Բիւզանդացին եղեր է որ կարծիք յայտնեց է՝ թէ Բ դպրութիւնը Սեբէոսին գործն է, և թէ՛ այնտեղ յիշուած Սա. Տարօնացին ոչ է Ասողիկն:

Հեղինակն առանձին մտադրութեան առարկայ եղեր է « քննութիւն Բ դպրութեան » (յէլս 20—53), զոր չորս մասանց բաժնիք է՝ աւելի պարզութեան համար. ա: Պարթեաց ժամանակագրութիւն, Բ. Մամիկոնեանց ծագման հատուածն, Գ. Խանուն ցանկ թագաւորաց Պարսից, Յունաց և Հայոց. Դ. Երկանուն ցանկ թագաւորաց Պարսից և Յունաց: Ա մասին աղբիւրները քննելով իրարու հետ կը համեմատէ այն կտորները, որոնք կը գտնուին՝ հանդերձ յաւելուածներով՝ Ասողկան պատմութեան մէջ, և համարիչ փաստերով՝ կապացուցանէ՝ թէ վերջինս է բանաբաղն Բ դպրութեան այս մասին, և անտեղի է հակառակն հաստատել: Արդէն կը ծանուցանէ յիշեալ դպրութեան զրիշն կամ խմբազօրը՝ թէ իրեն միակ աղբիւրքն եղած են Մ. Խորենացի և Սա. Տարօնացի. իսկ արդ անոր մէջ բովանդակուած բոլոր նիւթերն՝ չեն գտնուիր Մ. Խորենացոյ մէջ և նոյն իսկ աչքի գալնող տարբերութիւններ կը տեսնուին, չին ուրեմն նուիք նոյնպէս Ասողկան մէջ. ապա զուրեմն ուրիշ աղբիւր մի փնտռու է. և զա՛ ուրիշ ոչ ոք է, բայց միայն Սա. Տարօնացի՝ պատմիչ և ժամանակագիր՝ որիշ յԱսողկանէ: Անցնելով Բ մասին, յորում կը խօսուի Մամիկոնեանց ծագման վրայ, կը տեսնեք որ չի կապուիր նա առաջին մասին հետ, կը զիջացաւ կը մնայ. ապա ուրեմն, կամ այն է որ՝ այդ ամբողջ հատուածն յետոյ ներմուծուած է հոն, և կամ՝ Մալխասեանի կարծիքով՝ « ձեռագրից թուղթ ընկած է »: Սոյն հատուածին՝ մասամբ միայն աղբիւր եղեր է Մ. Խորենացին, իսկ Ասողիկ ամենին չէր կրնար ըլլալ, քանի որ Մամիկոնեանց ծագման մասին՝ բնաւ տեղեկութիւն չի տար, այլ մի անգամ միայն կը յիշէ « ճենաղինեան » Մամիկոն (յէլս 64) և ոչ այլ ինչ: Նոյնպէս երրորդ և չորրորդ մաս.

<sup>1</sup> Սեբէոսի ուսու. Թարգման. Ս. Պետերբուրգ, 1863: Առաջաբան, եր. 6 և յաջ.:

սերուն, որք են՝ հոտանուն և երկանուն ցան-  
կերն թագաւորաց, ոչ բարդորովն Մ. Թո-  
րենացի և ոչ ալ Ասողիկ կրնային աղբիւր  
ըլլալ, ինչպէս կը ցուցնէ Պ. Մալխասեանց  
(յէջ 44—53). յորմէ կը հետեցունէ նա՝  
թէ ուրիշ աղբիւր փնտռելու է անոնց, և դա  
ուրիշ ոչ ոք է՝ բայց Բ զպրութեան սկիզբը  
յիշուած Ստ. Տարօնացին, որ չէ Ասողիկն՝  
այլ ուրիշ անձ։ Սոյն կարծիքը հաստատե-  
լու համար մէջ կը բերէ 1868 թուականին  
Արարատ ամսագրին մէջ տպուած մի հին  
յիշատակարան, յորում կը գտնենք յիշուի  
Ստ. Տարօնացի անուամբ անձ մի, իբր «ա-  
շակերտ սրբոյն Մեսրոպայ», որ զբեր է  
պատմութեան մի «Հանդերձ ժամանակագրո-  
րեամբ» (յէջ 55). և նոյն պատմութենէն  
հատուած մի մէջ բերուած է յիշեալ յիշա-  
տակարանին մէջ, զոր համեմատելով Պ.  
Մալխասեանց Բ զպրութեան գ և դ մասե-  
րուն հետ, երկուքին մէջ նմանութիւն կը  
գտնէ նիւթի և ոճոյ։ Այստեղ յարգելի բըն-  
նադատն շատ հարեանցի կ'անցնի, առանց  
ապացոյցներու՝ թէ յիշուի կարծուածին չափ  
հփն է այդ պատուովի մի գրութիւնն, կամ  
թէ յիշուած Ստ. Տարօնացին իրօք աշա-  
կերտ էր ս. Մեսրոպայ, թէ որչափ վըս-  
տահութեան արժանի է այդ յիշ. գարուն  
գրուած յիշատակարանին տուած տեղեկու-  
թիւնն, որ ուրիշ ոչ մէկ տեղ չի գտնուիր՝  
ի՛նչ յառաջ և ոչ յետոյ։ Դարձեալ, կարելի  
չէ՞ թէ այդ «պատմութիւնն գրեալ հանդերձ  
ժամանակագրութեամբ» ըստանձն՝ պարզա-  
բար եկեղեցական պատմութիւն մ'եղած ըլ-  
լայ, հետեւողութեամբ Եւսեբեայ՝ մինչև ուր  
որ կը հասցունէ սա, և կամ՝ հայկական  
եկեղեցոյ առաքելական իրաւունքը կամ  
անկախութիւնը ջատագովելու նպատակաւ  
եղած գրութիւն մի, յորում յետ Կեսաբիոյ  
հայրապետաց յաջորդութիւնը հասցնելու  
մինչև ի ս. Ղևոնդիոս, ապա կ'անցնի ս.  
Լուսաւորի և անոր յաջորդաց շարունակու-  
թեան։ Կարելի է թէ հին մատենագիր մ'ի-  
գած ըլլայ այդ յիշատակուած Ստ. Տարօ-  
նացին, — եթէ երբեք զոյութիւն ունեցեր է, —  
բայց ի՞նչպիսի հին, Բն զարու մէջ ապրած  
է, Բն չէր անոր զրքէ բովանդակութիւնն,

և այն, զիս լուսաբանուելու կարօտ խնդիր-  
ներ են սոքա։

Պ. Մալխասեանց իւր դիտած նպատակին  
հասնելու համար՝ նկատողութեան կ'առնու-  
նակ այն կէտը, թէ տպագրին Ա, Բ և Գ  
զպրութեանց բաժանումն՝ պարզաբար հրա-  
տարակչին կամայական գիւտն է, մինչդեռ  
ձեռագրաց մէջ շարունակաբար գրուած է  
ամբողջ գիրքն՝ զլուսնորու բաժնուած, և մի  
միայն խորագիր կրելով գրքին սկիզբը, այն  
է «Պատմութիւն Սեբեոսի եպիսկոպոսի ի  
Հերակն»։ Սոյն տեղեկութիւնը տրուած է  
նաև Տաշեանի Յոռցակին մէջ<sup>1</sup>։ Սա յիշուի  
բաւական ուշագրաւ կէտ մ'է, մանաւանդ  
որ մինչև ցարդ գտնուած չէ Սեբեոսի ոչ մէկ  
ձեռագիր, որ չունենայ այդ Ա և Բ կոչուած  
զպրութիւնները, և կամ ո՛ր և է անշատման  
նշան մ'ըլլայ յիշեալ զպրութեանց և Սե-  
բեոսի պատմութեան մէջ։ Ոչ նուազ յաջող  
կերպով էր բացատրէ Պ. Մալխասեանց  
(յէջ 68) Ա զպրութեան ներածութեան խօս-  
քերը, ուր փոքր ինչ յետոյ կը պարզէ եր-  
կու անգամ յիշուած «զամս և զաւուրս հինգ  
թագաւորացն» խօսքերը։ Գ. Պատկանեան  
և Ն. Մառ կը նոյնացնեն այդ երկու անգամ  
կրկնուած բացատրութիւնները, մինչ Ս.  
Մալխասեանց ամենայն իրաւամբ կ'որոշէ  
զանոնք. վասն զի առաջինն կը նշանակէ  
Ա զպրութեան զրոգին ժամանակակից հինգ  
թագաւորները, «զարդեան ժամանակացս...  
զամս և զաւուրս հինգ թագաւորացն», ուր  
ճիշդ տեղն է հինգ բառն. մինչ երկրորդին  
մէջ «զորշմալ ի վիմի զամս և զաւուրս հինգ  
թագաւորացն» խօսքին անմիջապէս կը կցէ  
«Հայոց և Պարթեաց». ուր անտարակոյս,  
ըստ սրբագրութեան Գ. Պատկանեանի, պէտք  
է կարդալ հին և ոչ «Հինգ», ինչպէս կը  
տեսնենք բուն արձանագրութեան մէջ «գրե-  
ցի ի վերայ արձանիս... զամս առաջին թա-  
գաւորացն Հայոց»։ Պ. Մալխասեանց երեք  
մասանց կը բաժնէ Սեբեոսի ամբողջ պատ-  
մութիւնը՝ Ա և Բ զպրութիւններն ալ ի միատին

1. Յ. Տաշեան. Յոռցակ հայ Զեաւագր. Մա-  
տենագ. Մխթր. ի վիճեմա. Եր. 429, էջ 1-2։

առած առաջին մասը կը կազմէ, ըստ իրեն, Ա զպրութիւնն . երկրորդ մասը՝ Բ զպրութիւնն մինչև Գին Ը զլուսը . « իսկ երրորդ մասը . . . սկսում (է), կ'ըսէ, Ը զլիով, որ կրում (է) վերնադիր. Մատենան ծանաւնակեան, պատմութիւնն քաղաքական » : Ա . մենկին համակարծիք չեմ Մայիսանանին՝ այդ բաժանման մասին : Անտարակոյս է՝ թէ տպագրին մէջ (հրատ. Պատկան. յէջ 22)

ԵՂԵԴԵ (Ա յԵԼ. էջ 11. հրատ. 1893)

« Քանզի ի քանակ ազգին Արշակունեաց, տիրեցին աշխարհին Հայոց ազգն Սասանայ, որ վարէր զԵր իշխանութիւնն օրինօք մոգաց . . . վասն որոյ և աստուածապաշտոնքին քարձրաւ գոյոյս կամակարտքեամբ երևելի յինքն » . ևն :

Յերաւի Նախերգանք կոչուած գլխոյն մէջ մասնաւոր անցը կամ գէպը մի չպատմեր Սեբեոս, այլ միայն Արշակունեաց տէրութեան բարձումը կամ Պարսից տիրապետութիւնը իբրու պատմական գարազդու մասնաւոր, ուր կը կնքէ խորհնացին իւր պատմութիւնը, կարծես մտապիւր է նա վերջնայս պատմութիւնը շարունակել՝ մի և նոյն կորովի ոճով և հո՞ծ իմաստներով, և հաս. ցունել մինչև իւր ժամանակը : Բայց որովհետեւ իրմէ առաջ՝ Եղիշէ և Ղ. Փարպեցի կարգով և մանրամասնօրէն զբեր էին զրեւ. թէ 30 տարեկներու պատմութիւնը (429—459), համառօտիւ յիշատակելով նոյն անցըրերը, « այն ամենայն ի ձեռն այլոց զրեւ. ցաւ » կ'ըսէ, և իւր զգելիք պատմութեան ծրագիրը կը գնէ, սկսելով Պերոզի գահ ելլելէն (յամին 459) մինչև Պարսից թագաւորութեան բարձումը (որ պատահեցաւ յամին 652), չի հաշուելով վերջին մի քանի առանձնակի տեղեկութիւնները՝ որոնք կը հանրին մինչև 660 թուականն Գրիստոսի Որով Սկիւթի պատմութեան ժամանակի շափն է ճիշդ 200 տարուան շրջան մի. և յերաւի մինչև վերջը հաւատարիմ կը զատնուի իւր ծրագրին : Սոյն կարծիքս կը հաստատուի նաև Նախերգանքին վերջին տողով,

Նախերգանք կոչուածն, — որուն համար ինքն « անշարժ անուն » կ'ըսէ, — ըստ ինքեան շատ յարմար և յալող անուն մ'է, քանի որ Սեբեոսի յալող պատմելիքներուն բուն յառաջաբանը կը կազմէ, որ կարծես Եղիշեայ Ա յեղանակի յառաջաբանին վրայ ձևուած է, ինչպէս ակնհերկ կ'ըլլայ յետագայ մէկ օրինակէն .

ՍԵԲԵՈՍ (հրատ. Պատկան. էջ 22)

« Եւ եղև ի նուազել ժամանակաց տէրութեանն Արշակունեաց ի Հայաստան աշխարհի, ի քանակ տէրութեանն Վաւաշայոյ արքայի տիրէ ի վերայ որաւ ազգն Կարճեղովայեցի իշխանութեանն . . . միաբանութեամբ դառնալու է և մեծամեծ քաղցիցն . . . քարեպաշտութիւնն ևս քան զևս ժողովեալ պաշտասացաւ » :

յորում կ'ըսուի . « Զայս ամենայն կամեցայ ի ձեռն զրոյս այսորիկ կարճատու ձեզ վիպասանել » :

Ելջ 76—86 կը ցուցուի՝ Ա և Բ զպրութեանց և Սեբեոսի պատմութեան մէջ զրտնուած համարչեղութիւնը՝ թէ՛ պատմական տեսակետով և թէ լեզուի և ոճոյ նմանութեամբ . և այս նպատակաւ մէջ բերուած բազմաթիւ օրինակներն բաւական համոզիչ են՝ եթէ ոչ բոլորովին որոշիչ . այնպէս որ կշիռն կը հակի ի նպաստ Մայիսանանի կարծեաց, որով և վստահաբար կը հանէ իրեն 11 թուով եղրակացութիւնները (յէջ 94—97), զորս կրնանք երեքի վերածել հետեւեալ կերպով .

ա. Սեբեոսի պատմութեան սկիզբը զրուած Ա և Բ զպրութիւնը՝ նոյն պատմութեան ամբողջացնող մասերն են, հիմնուելով անոնց լեզուի, ոճոյ, զարձուածներու, պատմական տեսութեանց, և այլն, նոյնութեան վրայ, — որով և անոնց Անժանօք կամ Անանան հեղինակն է նոյն ինքն Սեբեոս :

1. Հեղինակն ամենեւին նկատողութեան առած չէ Ֆէատաբի այն խօսքերը՝ որ կ'ըսէ թէ « Պատմագարտներ (ի թերթին ZDMG, XL, 1861

բ. Բ դպրութեան սկիզբը՝ իբր աղբիւր յիշուած Ստ. Տարօնացիին չէ՛ Ասողիկին, այլ քան Սեբէոս աւելի հին ժամանակագիր — պատմիչ ոմն:

գ. Սեբէոս՝ գրիչ Բ դպրութեան՝ օգաուեր է պատմութենէն ՄԷ. Խորենացւոյ, զոր կը կոչէ «հշմարիտ և հաւաստի պատմագիր»:

Կ'անցնի ապա որոշելու Սեբէոսի պատմութեան գրուելու ժամանակը, նոյն իսկ պատմութեան նիւթերէն հանելով և ուրիշ ներքին «հանգամանքներն ի նկատ առնելով, կարող ենք, կ'ըսէ, ամենայն հաւանակաւ, նութեամբ ասել, թէ Սեբէոսը իւր պատմութիւնը վերջացրել է 664 և 668 թուերի

միջավայրում»: Հետեւեալ սոյն թուականներուն Սեբէոս օգտուած ըլլալով ՄԷ. Խորենացւոյ պատմութենէն, սա արդէն «տաւաժուած և հոշակուած է եղել է՝ դարի կէսերուն» (յէջ 100): Գրքուկիս շահագրգիռ մասերէն մին է՝ Ա յաւելուածն «Մի քանի ուղղագրութիւններ Սեբէոսի պատմութեան» խորագրով, յորում քան զամէն աւելի՝ իւրեն պատմական կարեւորութեամբ՝ աչքի զարնողն է Գ համարին մէջ սրբագրուածն (յէջ 105—109). իսկ բառերու շամ աւելանց ուղղագրութեան մէջ աչքէ վրիպածներ կան, ինչպէս հետեւեալքն:

Վ Ի Կ Ա Վ Գ

Ո Ւ Ղ Ի Վ Գ

Ա տպ. 9 = Բ տպ. 7. Սելեկիոս Նիսնոյր.

Սելեկիոս Նիսնոյր.

» 107 = » 67. Զի արք սկայագորք էին երկուքինն և կուռ սպառազինեալք:

« Զի արք սկայագորք էին երկուքինն և կուռ սպառազինեալք:

» 208 = » 133. Սուրբ և հշմարիտ ասացեալ է զժողով որ է կ. պոլիս ժողովեցան ի խափանումն Նեստորի:

« Սուրբ և հշմարիտ ասացեալ է զժողով որ է կ. պոլիս (կամ, յիշիեստս) ժողովեցան ի խափանումն Մալեդանի (կամ, Նեստորի):

Կը գտնուին ուրիշ ուղղագրելի վրիպակներ ալ, «որոնք աւելի աննշան երևելով հեղինակին», ինչպէս կ'ըսէ, չէ զետեղած իւր ցանկին մէջ:

Իմ նպատակն դուրս ըլլալով լրջօրէն քննել կամ ուսումնասիրել Պ. Մալխասեանի սոյն օգտաշահ գրքոյիւր, այլ պարզապէս դրախտական ակնարկ մի տալ և կամ ծանօթացնել զայն ընթերցող հասարակութեան, կը վերջացնեմ խօսքս՝ յայտնելով ուրախակցութիւններս յարգելի հեղինակին, որ յաջողիք է բաւական ծանրաւ կշիռ փաստերով հաստատել Սեբէոսի Ա և Բ դպրութեանց վաւերականութիւնը, որով անուղակի կերպով նպաստեր է նաև խորհնացւոյ դատին:

Հ. ՅՈՎՀ. ԹՈՐՈՍԵԱՆ

2. Մկրտիչ Նաղաշ եւ իւր տաղերը: — Հիւսուածներու հմուտ հեղինակը՝ Յովհաննէս Թլկուրանցին, Միջնադարեան Հայոց տաղերն ու տառնաւորները և Աղթամարցի ծանօթացընէլ յետոյ, կը հրատարակէ այժմ տառնաւոր տպագրութեամբ Մկրտիչ Նաղաշ և իւր տաղերը, որոնք Արարատ ամառգրի 1898 տարւոյ պրակներուն մէջ հրատարակուած են արդէն նոյն Հեղինակին՝ Ընդարաձակ կերպով և հմտութեամբ կը խօսի Նաղաշի կենաց և գործունէութեան վրայ իր (50) էջերու մէջ, և առաջին էջին ծանօթութեան մէջ կը յայտնէ նոր յիշատակարանի մը ձեռքն իյնալը՝ երբ արդէն շարուած էր, կ'ըսէ, համառօտ ուսումնասիրութիւնս, և «պարտք ենք համարում յիշել, կը յաւելու, որ Նաղաշի կենսագրութեան վերաբերեալ մի քանի ման-

Պ. 1) Համոգիւն կերպով կը ցուցընէ որ Յովհ. կաթողիկոս պատմագիրն (Թ և Ժ գաբ) տակաւին չէր գտած իրեն ձեռագիր Սեբէոսին մէջ

այս յաւելուածները» (Հայկական Աշխատասիրութիւնք Վիեննա, 1895. էջ 37. Ժամօթ):

բամանութիւններ և լրացուցիչ տեղեկութիւններ կան նորա մէջ, որ մենք չէինք կարող, ի հարկէ, ի նկատի ունենալ, ժանօթ չլիւնելով Աստուածատուրի յիշատակարանի\* բնագրին: Հրատարակած տաղերը 12 խոր են, և պէտք է ուրիշներ ալ ըլլան, կ'ըսէ, իր անուամբ, որոնք սակայն մեզի ծանօթ չեն: Եւ յիշաւ Տաղարանաց և Գանձարանաց մէջ կան այլ և այլ տաղեր, գանձեր, որոնց սկզբնական տողերը «Մկրտիչ» կը կապեն, բայց թէ ամէնքը Նաղաշի են, քննութեան կը կարօտի, ինչպէս որ դիտել կու տայ յարգոյ Հաւաքողն:

Առանց Տաղարաններու և Գանձարանաց խառնափնդը բաղդին մէջ մտնելու՝ փութանք նոյն իսկ Նաղաշի ձեռամբ գրուած յիշատակարանները դնել հոս, զորոնք կը զբտենք մեր մատենադարանի թ. 280 ժ. գեղեցկանկար Աստուածաշունչին մէջ, որ գրուած է ի Խլաթ, ի Թլին Պիւլէ—1418, որուն ծագողը է նոյն ինքն Նաղաշ, յուսալով որ կրնան օգտակար ըլլալ անոնք Նաղաշի ուսումնասիրողին:

Յովհաննու Յայտնութեան սկիզբը կը կարդանք. «Ջատուածարեալ և զտիեզերալոյս վարդապետն զստացող աստուածաշունչ տառիս զՅովանէս սրբախօն զբարունին աղաչեմ յիշել ի Տէր, Ընդ նմին և զմեղապարտ նկարիչ» գտրուպ ծառայ Համօրէն ծածկայից Աստուծոյ, զՄկրտիչ մեղաք զառացեալ, զի խոնջաքիրտն աշխատանաւք վաստակեցայ ի նկարել տառիս. աղաչեմ աղաչեմ, յիշման արժանի աննել զմերս աշարժանութիւն, և Աստուած յիշողաց ողորմեսցի, ամէն»:

Իսկ ամենէն վերջը, զրչին՝ որ է Կարապետ Բժիշկ, յիշատակարանն ետքը, ընդարձակ յիշատակարան մը կայ՝ գրուած Նաղաշի ձեռամբ, որմէ միայն Նաղաշի իրեն վերաբերեալ տողերը դնելով համառոտութեան համար, յիշատակարանին անմիջա-

պէս յաջորդող Մկրտիչի ահաւոր ժանտախտին աղիողորմ նկարագիրը՝ զոր սրտամկիկ կերպով կը ներկայացընէ Նաղաշ, կը դնենք ամբողջութեամբ:

«Փառք... Ասի յաստուածաբեալ արանց և յաստուածայնոց՝ եթէ կտակ յետ մահու կենդանի է. և ամենայն կտակադիր յուսով ապագայիցն և հանդերձելոց անկախութեան արասցէ կտակ, զի թերևս հասանէ յուսոյն կենաց աւժընդակութեամբ աղաւթից ապա եկելոցն մաղթանաւք: Վասն որոյ և ես մեռեալս հոգով... մեղսաւերս մահաւանդ քան աստուածասէր՝ մեղաւոր Մկրտիչ՝ բացատրութեամբ եպիսկոպոս և ստորաօսութեամբ ծոյլ և մորոս՝ կամ՝ եպիսկոպոս, յոր ձեռնամվարդապետ, և մեղաց եմ դասապետ. կերպարանիմ մարդ բանական, և վատթարագոյն ևս քան զգազան... վասն որոյ արարի կտակ հաստատուն՝ իմովս մեղսամակարբ մատամբ. զի կացցէ մնացէ անվերջ յետ իմոյս եղանիւղ ի մարմնոյս կտակ կենդանի, վասն աստուածաշունչն սուրբ կտակարանիս:

... Յիշեցէ ի Բրիստոս և զիս զեղկելիս զմեղաւոր Մկրտիչ՝ միայն անուամբ եպիսկոպոս. մականունն Նաղաշ կոչեցեալ. զշինող սուրբ կաթնուղիէին որ յԱմիթ մայրաքաղաք և Բարձր Աստուածածնին, ի յամուրն Արշնու. և զծնողսն իմ զԱւաքել քահանայն, և զՀոսիս խաթուն և զեղբայրն իմ զՅովս, քահա, և զպարոն Աբգարն, զհանգուցեալսն ի Բրիստոս. և զամենայն ազգայինսն մեր և զերեստաւորսն...»

Արդ եղև սկիզբն գրութեան սուրբ տառիս Պիւլէ թվ. և կատարուած ՊՆԱ թվ. և յորժամ ստացաւ Տէր Յովսէփն՝ էր թվ. ի ՊՂԸ ամին: Յորում ամի բացան պատուհանք հինից բարկութեան ի տանէն Աստուծոյ. և մերկացաւ սուրն վաղաւոր յազդերէ իւրմէ. և տարաւ ծեցաւ հուր ծախիշ ընդ ոլորտս տիեզերաց. ոչ եթէ խուս կամ հարուած՝ որպէս երբեմն յիսրայելի, այլ պատիժ և վրէժ աշխարհի

\* Սոյն յիշատակարանը՝ որ Արարատ ամսագրի 1898 տարւոյ յունեալիս պրակին յաւելուածին մէջ տպուեցաւ. կը գանձուի նստե-

մեր մատենադարանի թիւ 1020 վարք Հարսեցի մէջ նշանութեամբ:

կորստեան : Զի Հարուածն և խրատն՝ մին  
գաւառի լինի, զի միւսն խրատեսցի . իսկ  
պատիժն Համօրէն և ընթանալական, որպէս  
Յրհնեղեղան : Սոյնպէս և այսմ յամի յընթա-  
նուր արարածս տարածեցաւ տարածամ մահ .  
յիշանելոյն արեւու մինչև ի մուտս արեւու, ի  
հիւսիսոյ մինչ ի հարաւ . յամենայն ուրեք  
մահ սաստիկ, և մահտարածամ անըմբռնե-  
լի : Զի ոչ ոք հոտես կամ լուա ի հնոց կամ  
ի նորոց այսպիսի դառնալուր պատիժ, և  
հիանալի սեռողաց և լողաց զարմանալի,  
մինն այս է դառնութիւն սորա, զի բոլոր  
ամ մի է և Գ. ամիս որ ի Մերտինն է և  
ոչ վերանայ, և երկրորդ եղեճնապոյն դառ-  
նութիւն, որ մի անգամ և երկու հանէ խոց  
և ողջանա զաւուրս բազում, և զարձեալ կրկին  
հանէ և մեռանի : Եւ երրորդ զմենայ դառ-  
նութիւն ամին, զի յօր տունն որ մտանէ՝  
բնաջինջ առնէ ամենայնիւ : Չորրորդ սատա-  
կութիւն սորա զի ոչ տայ իմանալ զցաւն .  
երեկ թէ անգլաւն է, և իսկոյն մեռանի :

Որ և եղև մեզ գնալ և հանդիպել ի Մեր-  
տին քաղաք ի սոյն ամի և զանձ ժամանակի :  
Զոր ոչ կարող պատմել կամ ընդ զրով  
արկանել զանցս պգեալից և զմիւսք դառնու-  
թեան . զկսկիծս բորմոցման և զբաժակն  
բարկութեան . զոգրս արտասուաց և զբեկումն  
հառաչանաց : զվիշտս վառեալ և զհուրն բոր-  
բոցեալ . զաղիողորմն դառնութիւնն և զան-  
պատմելի տարակուսանս . զմեծակական հա-  
ռաչանս և զաղիողորմն արտասուս : Զի Աս-  
տուած էր խռովեալ և արարել զառնացեալ .  
զի անբարկանալին Աստուած էր բարկացեալ  
և կենսաբարս մահուն մատնեալ . զի ողորմածն  
Աստուած՝ անողորմ դատեցաւ, և քաղցր  
բնութիւնն՝ վրէժնալիկ յայտնեցաւ : Զի  
տուօնն կենաց հրամանն ետ մահու, և պա-  
հապան հրեշտակն հրեղէն սրովն խոցէ .  
քաղցր տեսութիւնն ընդ յակամբ հայեցաւ  
և սուրն վաղակաւոր՝ իսկոյն ընդ մէջ կտրէ  
զանմեղ մանկունսն : Զի սաստիկ էր պատգամ  
և ահեղ պատգամաբերն, զարաւոր էր զի-  
նաւորն, և սուրն և զարագլուխ ահեղին :  
Զի կարծեմ թէ որ յանապատին զի՛նի (զքսան  
և չորս հազարսն) կոտորեաց՝ այսօր ի միջի  
' ոռւմ՝ երեկ . կամ որ երբեմն յաւուրս

Դաւթեայ զէնի (զեթանասուն և հինգ հա-  
զարսն) ընդ մէջ կտրեաց ի միում ժամու,  
այսօր շողշողացն զսուրն բարկութեան ի  
միջի մերումն . կամ այն որ պարս Ըռափ-  
սակայ զձԶԻն (զհարիւր ութսուն և չորս  
հազարսն) սատակեաց, ցուցանէ այսօր և  
զմիւր դառնութեան պատժոյն, և առաւել  
դառնալոյն քան զնոյն : Զի անդ միայն ի  
գիշերի սպանանէր, և աստ ի տղէ և ի զի-  
շերի . զի անդ ի միում գիշերի, և աստ մի  
ամ և Գ. ամիս . զի անդ միայն զանհաւաստն  
սատակէր, և աստ զհաւատացեալն ևս : Զի  
անդ զմեղաւորն սատակէր և զարդարն ա-  
պրեցուցանէր . և աստ այսօր զարդարն վասն  
մեղաւորաց պատժէ . յամենայն առաւօտու  
փոխանակ լուսոյն՝ աղիողորմն կսկիծ ծագէ .  
և յամենայն աւուր փոխանակ արեւուն ա-  
րեան արտասուուք : Յերեկօրեայ էր տրամու-  
թեան, և ի մէջ գիշերի խաւար մահաբեր .  
և հաւախաւսին կանայք լալականք, և ընդ  
արշալուռն ողբերգականք պարաւոր :

Անդ էր տեսանել զոգրս արտասուաց, և  
անդաւոր զկսկիծն մեղկատանաց : Զայլն  
ծերոց արեան արտասուուք թաթաւեալ . և  
զմարքն որդէմեռ կիսամահ նուաղեալ . ու-  
մանք ծածակտուր, և այլք ոմանք հերարձակ,  
ոմանք սեւազգեստ, և կէսք հրապարակ . ու-  
մանք յարեան ճապաղեալ, և շատք ի խելաց  
անցեալ . ոմանք ապշեալք, և ոմանք կա-  
տաղեալք ի դառն կսկծանաց : Զի անմեղ  
դառինքն ի հուր ծնողացն եփեցան . մատաղ  
մանկունքն ի ծնողացն պատուհասեցան . որ-  
պէս ասէ Աստուած մարգարէին, եթէ հա-  
նեմ զմեղս հարց յորդին և յսրիս որպոց  
նոցա, և զմեղս մարց ի դատերս, և ի գուտոր  
դատեացն նոցա, և մարգարէութիւնսն այս  
այսօր յառ մեզ կատարեցաւ . զի վասն մեր  
մեղացն անմեղ մանկունքն կոտորեցան : Ո՛հ,  
դառն դատաստանին և սաստիկ վրէժնալու-  
թեանն : ո՛հ, անկասկած կատարածի և ար-  
ժանահաս պատուհառի . վայ է ինձ ի բիրս  
հազարաց և եղուկ է զիս . թէ զոր կսկիծ  
տեսի կամ զոր դառնութեան բաժակ ըմբեալ  
ճաշակեցի : Զի տեսի զնորաբողբոջ մանկունքն՝  
յաստաւածային ահեղ սրոյն . սասանեալ, զի  
թաւալէին մանկունքն առաջի ծնողացն որ-

պէս զգառն սրով զենեալ. կամ զձագս աղանոյ նետիւ խոցոտեալ, և լիբայ զրկաց մարցն նուաղեալ, և ողորմ ընդ երեսն ծնողին նայեցեալ զձեռնք մկննալ և զուսքն տարածեալ, և առ մայրն աղաղակեալ՝ և ի հօրէն ազնուութիւն խնդրեալ: Ոչ մայրն ողորմէր մանկան, և ոչ հայրն ազնական լինէր. և հրեշտակն ահեղ կերպարանօք զհօգին քակտէր և ընդ քակտիլ հօգոյն ամենողաց և ծնողաց հօգին խոցոտէր: Անդ էր տեսանել և զմանկունս մուրազալի աղիողորմն թաւալեալ. զնոր փեսայն և զնորահարսն, զի փոխանակ վայելալ անկողնոյն ի զէջ գետն և ի ներքոյ հօգին տարածեալ. և փոխանակ հարսանեացն՝ սուգ սաւառնացեալ. և փոխանակ ուրախարար երգոցն՝ կանայք լալականք և ողբերգականք: Արդ զորս լացից կամ զոր ողբացից. զորս ապաշաւեցից և զորոց պատմեցից. զանմիջ մանկունք, եթէ զկատարեալսն հասակաւ. զվայելալ նորափեսայքն, եթէ զզեղեցկագեղ նորահարսունքն. զուրարքոցս զկուսանքն, եթէ զսուրբ սարկազանքն, որ ամենեքեան ի միասին կոտորեցան, որպէս զծաղիկ նոնեանեաց հարեալ ի կարկտէ յաւուրս գարնանային: Զի ամենեցուն էր պատիմն և առ հասարակ պատուհասն: Անդանօր տեսանելի էր զի ամենայն աչք յարտասուք, և ամենայն բերան լալական. ամենայն անձին սուգ, և ամենայն սրտի տրտմութիւն: Եւ այս ամենայն եկն ի վերայ մեր վասն բազում մեղաց մերոց ի ՊԱՐԹՎ. Հայոց, յորում ամի աշխարհի սաստիկ պատուհաս ընդ ամենայն գաւառս տարածեցաւ և զբազումսն լալաղին արար, և զբազում ամանս անմարդարնակ. շատ մայր՝ առանց որդոյ արար, և բազում ծնող առանց զաւակաց. բազում սուս առանց տանուտէր. և բազում հարսն առանց փեսայի: Որ և ի սոյն ամի ասպատակեաց իւրանդ որդի Սքանդարին զհիկիրն քաջբերնոն, և իսաւ զամուրն Արճիշու և աւերեաց. և զաւագերէցն Արճիշու, այր շնորհալի, զրապիր և փլխսոփա՝ ի վառման թոնիրն խորովեցին. և զպզտիկ ընայիսն ամենայն ընդանեալք զերբ բերին յԱմիթ, և մեր տեսեալ զպառնութիւնն զայն՝ զի հարսունքն և դստերքն

մատնեալ էին ի ձեռս անօրինաց, աւժոնդակութեամբն Աստուծոյ զիս ի մահ ետու, և ԺԻԻ Թանկս տուաք իւրանդին. և ազատեցան Աստուծով ընայիսն և հարսունքն և աղչկունքն անարատ մնալով յանաբրինացն՝ կարողութեամբն Աստուծոյ, Յիսուսի Բրիտտոսի՝ Վասն որոյ կրկին անկամ աղաչեմք ըզձեզ հարք և եղբարք, յիշեցէք ի Բրիտտոս զամենայն ննջեցեալսն ի Բրիտտոս, զծնունդս սուրբ աւագանին, ևս առաւել որ ի սոյն ամի տարածամ մահուամբ առ Բրիտտոս փառացին, և խնդրեցէք ի Բրիտտոսէ յուսոյն մերոյ, զի զամենայն հաւատացեալ նրն՝ յեցեալսն արժանի արասցէ Բրիտտոս հաւքըստեան, անճառ լուսոյն, անտրտուռ ուրախութեան, անթաւալ պսակացն, աստուածային պարգևացն, երանաւետ ձայնին, անձեռագործ տաճարին, լուսազարդ խորանին, աշխղողման դասուն, անմահական օնդանոյն, երկնից բարբալութեան և աստուծային տեսլոյն արժանի առնէ, մանաւանդ զսուրբ վարդապետն Յովհաննէս և զմեղաւորս Մկրտիչ սոսկ անուամբ եպիսկոպոս Ամիթ քաղաքի և Մերանայ, Ուտայու և Թիլկուրնա՝ Հիւռու և Արդնու: Վայն է պատել զիս՝ յորժամ առնուն զհամար անտեսութեան:

Ողորմելի գերի Նաղաշ  
Քանի ուտես զարբն պըլաշ,  
Զաչքդ բաց ու հատր պաշ  
Որ չլինիս որդանցն ճաշ:

Երեցեք ի Բրիտտոս զԹանդուրէմիչ անդայն որ հանդիպեցաւ այսօր աստուծոյ Յիշեցէք ի Բրիտտոս զմիտսի Մահուան, որ յամենօր ինձ Ժ լաւ կու բերն:

Ինչպէս յայտնի է, Նաղաշի «Ողբ ի վերայ մեռելի» տաղին ինքեք սոյն ռարսափելի ժանտափելի է, բայց ինձ այնպէս կը թուի, որ այս նկարագիրը զուցէ շատ եւելի աղիողորմ է քան զտաղը՝ թէ սրտաշարժութեան կողմանէ և թէ ոճոյն, որով ալեզարդ ծերունին մօտէն տեսնելով ահաւոր ժանտափախին կոտորածները՝ փղձկեալ սրտիւ կ'ողբայ կը հնձէ:

Հ. Ա. ՂԱԶԻԿԵԱՆ